

ՀԱՅ ԳԱՂԹԱԿԱՆԱՅ ԿԵԴՐ. ՅԱՆՉՆԱԺՈՂՈՎԻ

ԴԻՄՈՒՄՆԵՐԸ

Յրանսայի հայ պաղթականներուն վերաբերեալ կարգ մը հարցերու համար Վերջին 8-10 ամուսնան ընթացքին, Հայ Գաղթականաց Կեդրոնական Յանձնաժողովը, հայասէր հանրածանօթ Փրանսացի անձնաւորութեանց միջոցով, կամ ուղղակի, Փրանսական իշխանութեանց մօտ կատարեց դիմումներ:

Յանձնաժողովը քանի մը հանրածանօթ անձնաւորութիւններու միջամտութիւնը խնդրեց՝ հայ արհեստաւորներու հարցին, ինչպէս եւ ղինուորական ծառայութիւնը վերջացուցած ըլլալով հանդերձ դեռ Փրանսական քաղաքացիութիւն չստացած Հայերու խնդրոյն մասին. տալով անոնց այդ հարցերուն վրայ ամփոփ տեղեկաւոր մը եւ ցուցակ մը արհեստաւորներու որոնք իրենց խանութք փակելու հրաման քառացած են. այդ անձնաւորութիւններն էին Լուի Մարէն, Մարիիւս Մուսէ եւ Լիւսիէն Հիւսէլ երեսփոխանները, ինչպէս եւ պատերազմական նախարարութեան մէջ կարեւոր դիրք մը ունեցող պաշտօնատար մը:

Յանձնաժողովը կը ջանար այդ անձնաւորութեանց միջոցով ստանալ ոչ թէ միմիայն անհատական հարցերու լուծումները, ինչ որ մասնաւոր դիմումներով կ'աշխատի միշտ ձեռք ձրել, այլ ընդհանուր որոշում մը որով Յրանսապալատանաժ տարադիր Հայերը օտարներ չը նկատուէին, այլ Յրանսայի պաշտպանեալներ՝ Վերսիլեայ անձնաւորութիւնները այդ ոգիով դիմումներ ըրած են աշխատանքի նախարարին, ներքին գործոց եւ արտաքին գործոց նախարարներուն մօտ: Պ. Լիւսիէն Հիւսէլ դիմած է ներսփոխանական ժողովի դեր-նախադահ եւ Փրանսացի արհեստաւորներու խորհրդարանական խմբակի նախագահ Պ. Ալպէր Փօլէնին, որմէ ստացած է հետեւեալ պատասխանը.

«Մերեւի բարեկամ, ստացայ նամակդ հաշագդի արհեստաւորներու մասին: Պիտի ջըննեմ այդ խնդիրը մէկ կողմէ արհեստաւորներու. այլ եւ այլ խմբակցութեանց ու միւս կողմէ Աշխատանքի ու Ներքին գործոց նախարարութեանց պաշտօնէութեանց հետ: Կը խորհիմ որ կարելի չէ այդ խնդ մարդիկը ձգել այդ կացութեան մէջ, բայց թէ, միւս կողմէ, անհրաժեշտ է միջոցներ ձեռք առնել որպէս զի տնոք մեր արհեստաւորներուն համար աղիտաբեր մըցակցութեան մը չդիմեն, ղիները կտորելու մէջ իրար գերադանցել ջանալով, ինչ որ կ'ընեն շատ օտար արհեստաւորներ:»

Պ. Փօլէնին տրուեցան հարկ եղած տեղեկութիւններն ու լուսաբանութիւնները:

Իսկ Պ. Մարիիւս Մուսէ Աշխատանքի նախարար Պ. Փօմարէէն ստացած է հետեւեալ պատասխանը՝ ղինուորացիլուած հայ երիտասարդներու մասին.

«1929 Ապրիլ 12 Թուակիր ձեր նամակով, բարեհաճած էիք ուշադրութիւն հրաւիրել այն կացութեանը վրայ որուն ենթարկուած են հայ տարագիրները որոնք իրենց ղինուորական ծառայութեան ընականոն չըլանը կը բոլորեն՝ Յրանսա գտնուող օտարականներու գործունէութիւնը կանոնադրող օրինական կարգադրութեանց համեմատ:

«Պատիւ ունիմ ձեզի իմացնելու թէ Փրանսական ղինուորական պարտաւորութիւններ կատարող տարագիրներու կացութիւնը իմ բովանդակ ուշադրութեանս առարկայ է եւ թէ շահարկողուող աշխ եւ այլ նախարարութեանց կողմէ պիտի ուսումնասիրուի ի մօտոյ:»

Յանձնաժողովը արտաքին գործոց նախարար Պ. Պոնէին ուղղեց ներկայ տարուան 21

Մարտ թուականով յուշագիր մը, որուն ամբողջական թարգմանութիւնը կուտանք ստորեւ.

«Պարոն Նախարար,

«Հայ Գաղթականաց Կեդր. Յանձնաժողովը պատիւ ունի ձեր բարձր բարեացակամութեանը ենթարկելու քանի մը էական հարցեր որ Ֆրանսա ապաստանած Հայերու բարոյական ու նիւթական կացութեան հետ կապ ունին: Նպաստաւոր լուծում մը այդ հարցերուն զոր ստորեւ կը թուենք, զօրացնել միայն կարող է մեր հայրենակիցներուն երախտագիտութեան եւ սիրոյ զգացումները հանդէպ այն մեծ երկրին որ իրենց ապաստան շնորհեց եւ զոր որդեգրեցին իբր իրենց երկրորդ հայրենիքը:

«1.— Ֆրանսական բանակի զօրահաւաքման 1928 Մարտ 31ի օրէնքի § 3 2 յօդուածին 1938ի ընթացքին կիրարկումը՝ երիտասարդ Հայերուն մօտ դառաւ փութկոտ ընդունելութիւն մը: Առանց ոեւէ բացառութեան՝ անոնք պատասխանեցին, հակառակ իրենց ձգուած ազատութեան, իրենց զօրադասի կոչին եւ կատարեցին կամ կր կատարեն անկից ի վեր իրենց ծառայութիւնը, ուրախ ենք զայդ հաստատելու, եռանդով եւ ուղղամտութեամբ: Գալով 22էն 33 տարեկան երիտասարդներուն, որոնք մարզահամարի եւ բժշկական քննութեան ձեւակերպութիւններն անցուցին, անոնց մէկ մեծ մասը, թէեւ սովորուած չլըլային զինուորական ծառայութիւնն ընելու, կամաւորապէս արձանագրուեցան:

«Թող մեզի թոյլ տրուի յիշեցնել հոս թէ Ադգայրն Պաշտպանութեան եւ Պատերազմական Նախարարութեան 1937 Փետրուար 24ի չըջաբերականը դանադան զինուորական իշխանութեանց կը յանձնարարէր որ այդ երիտասարդներուն հասկցնէին թէ զինուորական ծառայութեան պարտաւորութիւնը պէտք էր նկատելին ոչ միայն իբր պատիւ մը, այլ եւ իբր առաւելութիւն մը, մասնաւոր Ֆրանսական քաղաքացիութեան ընդունուելու եւ ծառայութիւնը աւարտելէ անմիջապէս յետոյ աշխատութեան արտօնումներն ինքնաշարժաբար ստանալու տեսակէտով:

«Այսօր, հարկադրուած ենք հաստատել թէ այն հայ զինուորները որ իրենց ծառայութիւնը վերջացուցած են, դեռ չեն ստացած իրենց քա-

ղաքացիութեան պաշտօնապիրը եւ կը շարունակեն ապրիլ իրենց օտարականի անձնապիւրնիրով որ զօրծարաններու եւ աշխատանոցներու դուռներն իրենց աւելեւ կը փակեն եւ իրենց թոյլ չեն տար իրենց հաշտին իբր արհեստաւոր խանութ բանալ: Առանց ընծայուած միակ շնորհի, իրենց՝ ինչպէս եւ իրենց ամուսնին՝ անձնապիւրն մըր տրուիլն է, առանց իսկ որ այդ շնորհը տարածուի նաեւ իրենց ծնողքին:

«Նոյնպէս, 22էն 33 տարեկան Հայերը, որ իրենց զինուորական տեսրակն ունին եւ կատարած են կամ պիտի կատարեն իրենց որոշ ժամանակով ծառայութիւնը ու կարող են վաղը դրօշի տակ կանչուիլ, ոեւէ առաւելութիւն չեն ստանար: Ոչ միայն չեն ստանար Ֆրանսական քաղաքացիութիւն, բար մը որուն կը թուի որակայն թէ իրականը ունին, այլ եւ 1937 Օգոստոս 28ի հրամանագիր-օրէնքը ոչ մէկ շնորհում չի նախատեսեր անոնց՝ ինչպէս եւ իրենց ամուսնին կամ ծնողքին՝ անձնապիւրն վճարման համար:

«2.— 1935 Օգոստ. 8ի օրէնքին հայ արհեստաւորներուն կիրարկումը, ցաւաքին կացութիւն մը ստեղծեց հարիւրաւոր հայ արհեստաւորներու համար: Տարագիրներ, երկար տարիներէ ի վեր Ֆրանսա հաստատուած, ամուսնացած, հայր մէկէ աւելի զաւակներու որ այս երկրին մէջ ծնած ու Ֆրանսացի յայտարարուած են, իրենց արհեստաւորի քարթին ջնջուիլը տեսան եւ իրենց կրպակը կամ խանութիկը գոցելու հրամանը ստացան: Անոնցմէ չատերը, անտեսական մեծ տաղնապի միջոցին՝ անգործ մնացած՝ եւ չուզելով անգործութեան նպատէն օգուտիլ, փոքրիկ առեւտուր մը հաստատած էին՝ իրենց բոլոր խնայողութիւնները անոր մէջ զննելով կամ փոխ դրամ առնելով, եւ այսօր յանկարծ զրկուած են երկար տարիներու դատանքին եւ զրկումներուն արդիւնքէն: Ծարտարարուեստական աշխատաւորի քարթը որ անոնց ինքնաշարժօրէն կը տրուի իրենց արհեստաւորի քարթին տեղ, իրապէս օգուտ չունի իրենց, վասնզի շատ քիչ հաւանականութիւն ունին աշխատանք գտնելու՝ օտար աշխատաւորութեան թիւին սահմանափակման եւ օտար բանաւորներու գործ շտալու տիրող տրամադրութեան

հետեւանքով: Այսպէսով կը կազմուի ամբողջ դաս մը հայ տարագիրներու զոր իրենց ու իրենց զաւակներուն հացն ապահովելու հարցը կը մտատանջէ:

«Ե. — Պարագայ մը որ ոչ նուազ արժանի է շահագրգռութեան եւ կարեկցութեան, կացութիւնն է այն տարագիրներուն մը՝ իրենց անձնագիրը վերանորոգելու ու յետացած ըլլալով՝ դատարան կը կանչուին ու մեծագումար տուգանքի ու նոյն ատեն մէկ ամիս բանտարկուած թեան կը դատապարտուին: Եթէ խնդիրը վերաբերէր միայն լաւ գործ թնեցող ու քաջանող մարդոց որ՝ անհոգութեամբ՝ իրենց պարտաւորութիւնները չեն կատարած, առոր խօսքն իսկ պիտի չընէինք: Բայց շատ անգամ, ծերունիներ ու պառաւ կիներ են, յաճախ հիւանդներ, նիւթական միջոցներէ բոլորովին զուրկ, որ օրէնքին խտուրթեանց կ'ենթարկուին: Ատկի՛ դատ, տեսնուած է սրտանմլիկ պարագան երբ տասարդ մարիերու որ իրենց մատաղ մանկիկը թողով բանտ երթալու ստիպուած են: Վարչական պարզ կարգադրութիւն մը, որ ձրի անձնագիրներու յնորհն ընէ՝ ինչ որ արդէն նախատեսուած է անձնագիրներու կանոնադրութեան մէջ, — եւ ուշացման պատիժներուն նե՛րումը որդէ, այդ տատապանքներուն վերջ պիտի դնէր, մանաւանդ որ ծանօթ են այն աղիտաւոր հետեւանքները զոր տարագիրի մը համար կրնայ ունենալ դատապարտութիւն մը որուն կը յաջորդէ բանտարկութիւն:

«Զ. — Արտաքսման վճիռ ստացած հայ տարագիրներուն վիճակը մտահոգութեան ուրիշ աղբիւր մըն է մեզի համար: 1938 մայիս 2 եւ 14ի հրամանագիր-օրէնքները որ կը պայմանագրեն թէ՛ ճարն օտարակազմները որ Ֆրանսայէն հե՛ռանալու անկարելիութեան մէջ են, պիտի կարենան բռնադատուիլ ներքին Գործոց նախարարին կողմէ՛ նշանակուած վայրերուն մէջ բնակելու», կը թուի թէ տակաւին իր ընդհանուր կիրարկումը չէ գտած: Արտաքսման վճիռները եւ այդ վճիռներուն հնազանդած չըլլալու համար դատապարտութիւնները կը շարունակուին, աւելցնելով այդպէսով թիւը անոնց որոնք բանտարկութենէ բանտարկութիւն երթալու հառապատկերին անձկութեամբ մէջ կ'ապ-

րին: Վերոյիշեալ հրամանագիր-օրէնքներու կիրարկումը այդ տարագիրներուն, այսինքն՝ որոշ ընակավայրի մը նշանակումը, աշխատանքով մը իրենց օրապահիկը ապահովելու հնարաւորութեամբ, վերջ պիտի դնէր իրաց այս վիճակին:

«Կը համարձակինք ուրեմն ձեր բարձր բարեացակամութեան ենթարկել Ֆրանսայի հայ տարագիրներուն բաղձանքները:

«Ա. — որ իրենց գինուորական ծառայութիւնը լրացուցած հայ տարագիրներուն Ֆրանսակա՛ Քաղաքացի Ծանցցուիլը արագացուի, եւ անոնոր ծնողքը՝ իրենց անձնագիրը ձրի ստանալու առաւելութիւնէն օգտուին:

«Բ. — որ նոյն շնորհը վայելին նաեւ այն տարագիրները որ գինուորական տեսրակ ունին:

«Գ. — որ հաստատուած հայ արհեստաւորներ արտօնուին իրենց առեւտուրը շարունակելու հեռապատկերին անձկութեամբ մէջ կ'ապալուին կատարած են կամ որ իրենց գինուորական տեսրակն ունին՝ արհեստաւորի քարթ ունենալու համար մատուցած նոր խնդրանքները նպաստաւոր ընդունելութիւն գտնեն:

«Դ. — որ չեսուր տարագիրներու անձնագիրները ձրիաբար վերանորոգուին եւ ուշացման պատիժները չեղեալ նկատուին:

«Ե. — որ Ֆրանսայի մէջ որոշ տեղ մը ցոյց տրուի անոնց որ Ֆրանսայէն հեռանալու հրաման ստացած են, եւ անոնց ապահովուին իրենց՝ եւ ի հարկին իրենց ընտանիքին՝ օրապահիկ իրենց աշխատանքով ճարելու միջոցները:

«Մասնաշաղկուկ կացութիւնը Ֆրանսայի մէջ գտնուող հայ տարագիրներուն որոնք չեն կրնար ուրիշ օտարականներու հետ չփոխուիլ շատ անգամ ընդունուած է կատարարական բարձր չըջանակներուն կողմէ: Անոնք այս երկիրը եւ կած են անասելի աղէտներու հետեւանքով, որոնք արդիւնքը եղած են Ֆրանսայի եւ իր դաշնակիցներուն դատին հանդէպ անոնց ցոյց տրուած հաւատարմութեամբ, հաստատուած են այստեղ առանց վերադարձի կարելիութեան, մեծ զանգուածին հետ նոյնացած են եւ կը կազմեն կարգի ու աշխատութեան տարր մը: Ֆրանսայի մէջ ծնած ու Ֆրանսացի յայտարարուած իրենց զուակներուն թիւը կրնայ տարբ-

հաղարդել աւելի հաշուել: Անհրաժեշտութիւն — նը միայն՝ այդ փոքրիկ փրանսացիներու ծնողքին համար՝ իրենց զաւակներուն պէտքերուն հոգացման ծախքերն ապահովելու, պիտի արդարացնէր այն բարենպաստ կարգադրութիւնները զոր պատիւ ունինք հայացելու եւ որոնց համար կը խնդրենք որ հաճիք միջմտելու ձեռնհաս իշխանութեանց մօտ:

Վանիսալ յայտնելով ձեզի մեր ամենէն խորին շնորհակալութիւնները, պատիւ ունինք. պարոն նախարար, ձեզի ներկայացնելու մեր շատ բարձր համարման հաւաստիքը:

Հայ Գղթ. Կեդր. Յանձնաժողով՝
Ընդհ. քարտուղար Նախագահ
ԼԵՒՈՆ ԲԱՇՈՒԼԵԱՆ Ա. Չ.

Պ. Ժօրժ Պօնէ ցարդ պատասխան մը չտուաւ այս յուշագրին: Գղթ. Յանձնաժողովի նախագահը նոյն յուշագրին մէկ պատճէնը զրկեց ծերակուտական Կիւսթավ Կօթըրոյին հետեւեալ նամակով խնդրելով որ ան ուժ տայ Յանձնաժողովի դիմումին:

«Պարոն Ժերակուտական,

«Պատիւ ունիմ ձեզի զրկելու պատճէնը խնդրագրի մը զոր Արտաքին Գործոց Պ. Նա — խարարին ուղղեցինք Ֆրանսա գտնուող հայ տարագիրներու վերաբերեալ քանի մը հարցերու մասին:

«...Ոչ ոք ձեզմէ աւելի լաւ կարող է, պարոն Ժերակուտական, յիշեցնել կառավարու — թեան այն պատճառները որոնց համար քանի մը տասնեակ հազար Հայեր պատերազմէն յետոյ կեանք Ֆրանսա ապաստանելի: Սիրւոքի, ուսական հայաստանի եւ Կովկասի բոլոր Հայերը, պատերազմի ընթացքին որդեկրեցին Ֆրանսայի եւ իր զանակիցներուն դատը, հազարաւոր կամաւորներ տուին Ֆրանսայի կազմակերպած Արեւելեան Լէգիոնին ինչպէս եւ Օտար Լէգիոնին, եւ քանի մը տասնեակ հազար կամաւորներ Կովկասի ուսական բանակին: Թուրքերը պատերազմի առեւ ջարդեցին կամ վայրագ սեղանանութիւններով որ ծպտեալ ջարդեր էին՝ փնացուցին օսմանեան պետու — թեան հայ ազգաբնակչութեան կէսէն աւելին,

այսինքն աւելի քան մէկ միլիոն մարդկային արարած, եւ այս անօրինակ աղէտէն վերապրողներուն մեծ մասը ապաստանեցան անդրկովկասեան Հայաստան, Կիլիկիա եւ Իգդիրի շրջանը, եւ երբ Ֆրանսական զօրքերը քաշուեցան Կիլիկիայէն եւ Իգդիրի շրջանն ու Պոլսը թուրքերու ձեռքն անցան նորէն, տարալիտները եկան ապաստան խնդրել Ֆրանսայէն, Սուրիայէն ու Լիբանանէն, ինչպէս եւ Յունաստանէն ու Պուլկարիայէն, միակ երկիրները որ հաճեցան հիւրընկալել հաւաքը եւ նուիրական աղէտէ մը ճողորմած այդ էակները: Այդ ապաստանեալները, որ արդէն օգտակար ու բեղուն տարր մը կը կազմեն՝ թէ՛ մտաւորական տեսակէտով եւ թէ՛ իրր աշխատաւոր ուժ, միթէ արժանի չե՞ն Ֆրանսայի պաշտպանեալները նկատուելու եւ ու թէ օտարներ: Այս է հիմքը մեր յուշագրին, որուն կը խնդրենք որ ուժ տաք...»:

Պ. Կօթըրո կատարեց իրմէ խնդրուածը եւ ստացաւ հետեւեալ պատասխանը արտաքին գործոց նախարարութեան ընդհանուր քարտուղար Պ. Ալէքսի Լէժէնէն եւ որ յուշագրին մէկ կէտին մասին յուշագրիչ խօսքեր կը պարունակէ:

«Պարոն Ժերակուտական,

«Մարտ 31ի ձեր նամակով դուք հաճեր էիք ուշադրութիւն հրաւիրել այն դժուարութեանց վրայ որոնց կը հանդիպին հայ տարագիրները Ֆրանսական քաղաքացիութիւն ստանալու համար, նոյն իսկ երբ իրենց զօրադասի կոչին պատասխանած ու ծառայութիւն կատարած են: Այդ կարգի օտարականներու կացութիւնը արդարեւ չահադրգութեան արժանի երեւցաւ ինձի: Փութաքի ուրեմն հաղորդել արդարութեան նախարարին այն խնդրագրի որ Պ. Չօպանեանի միջոցով ինձի ներկայացուած էր, խնդրելով անկից որ ամենամեծ բարեացակամութեամբ թնէ անոր գոհացում տալու կարելիութիւնը: Դատական նախարարին պատասխանը պիտի հաղորդեմ ձեզի՝ անմիջապէս որ զայն ստանամ:»

Պ. Գիւլման, Այգլերու Ընկերութեան զաղթականային բարձր Գոմիսար Սրբ. Զեպարթ Եմրըսընի օգնականը, Մայիս մէկին Փարիզ գտնուելով, Հայ Գաղթականաց Կեդր. Յանձնաժողովի ընդհ. քարտուղարը անոր յանձնեց

այդ յուշագրէին օրինակ մը: Մայրիս 25ին, ճոյն յուշագրէն օրինակ մը յանձնեց նաեւ Ալլընի Բլէյզլէրի Օֆիսի վարիչ մարմնոյն նախագահ Պ. Պատիսեանին որ զայն կարողալէ յետոյ դրեց բարձր Գովարարին թէ ինք ալ լիովին համաձայն է յուշագրին բովանդակութեանը:

Ինչպէս կը տեսնուի վերոյիշեալ վաւերաթուղթերէն, Գալթ. Կեդր. Յանձնաժողովը ըրած է ինչ որ կրնար հայ դաղթականներու կա-

ցութիւնը Փրանսական կառավարութեան պարզելու եւ անոնց դատը պաշտպանելու համար: Արմատական լուծումներ ցարդ հնարաւոր չէ եղած ձեռք ձգել, հակառակ հանրածանօթ խորհրդարանական անձնավարութեանց միջամտութեան. ստացուած են անհատական արդիւնքներ, մէկիկ մէկիկ կատարուած ու կրկնուած, երեքնուած դիմումներով: Պէտք է չարունակել այդ աշխատանքը:

Պ. ՄԵՍՐՈՊ ՍԵԹԵԱՆԻ «ՃԵՂԴԻՄ»Ի ԱՌԻԹՈՎ

Պ. Մեսրոպ Սեթեանը Անահիտի 1-2 (1939) համարում Շահ Սուլթան Տօպէյնի թագաւորութեան շրջանի մասին հաղորդել է մի շարք տեղեկութիւններ: Պատմական աղբյւրներէն աւելի մանրամասն, աւելի ընդարձակ եւ խորացուած էջերով արձանագրուած են դեռ 1880 թվականին Յարութիւն Տէր-Յովհաննէսի Պատմութիւն Նոր Զուղայի գրքում (Ա. հատոր, էջ 201-221), որից էլ Պ. Մեսրոպ Սեթեանը լայն չափով օգտուել է: Ամէն մի լուրջ ընթերցող, որ կարդացել է Նոր-Զուղայի պատմութիւնը նա չի կարող ծանօթ չլինել պատմական անցեալի այդ մասի էջերին: Ուրեմն, իրաւացի չեն Պ. Մեսրոպ Սեթեանի հետեւեալ տողերը, երբ նա գրել է, թէ՝

«Արամ Երեմեան մօտէն տեղեկալ չըլլալով այդ վայրագ վեհապետի պատմութեան, Անահիտի 1938 յուլիս-սեպտեմբեր (պիտի լինի) գեղեցիկներէ. Ա. Ե.) թիւով հրատարակուած յօդուածին մէջ այդ մոլլայապաշտ արքան կը ներկայացնէ իր հայասէր, բնկով, թէ ան յաճախ կը հիւրասիրուէր Նոր-Զուղա խոճա Մարգար Լիւորեանի ապարանքին մէջ»:

Պ. Մեսրոպ Սեթեանի այս «գիտարարութիւնը» չի դիմանում քննադատութեան, որովհետեւ նրա յօդուածի էութեան մէջ իր տրամա-

բանութեան մէջ իշխում է մի տարօրինակ հակասութիւն: Պարզե՞ք. նախ՝ Արքայի խոջա Լիւորեանի ապարանքում հիւրասիրուելու հանգամանքը երբեք չի հաստատուած, որ նա եղել է իրօք հայաւեր. նման տեսակէտ երբեք չի շօշափուած մեր յօդուածում: Ընդհակառակն, արքայի մասին մեր յիշատակած ժողովրդական աւանդութիւնը՝ խոջա Մարգարի գեղանի հարսի հետ նորա յարաբերութեան մասին արձանագրելով, պարզապէս ցոյց ենք տուել Շահի ո՛չ թէ հայաւեր դիմագիծը, այլ նրա բռնակալ ուղին: Ուրեմն, մոլլայապաշտ արքային մեր յօդուածում իբր հայասէր ներկայացնելու պատմութիւնը՝ Պ. Սեթեանի կողմից հաղորդուած անձիշդ տեղեկութիւնն է:

Անուհետեւ Պ. Սեթեանն էլ աւելի խորանալով իր որոնումներէ մէջ, ձգտել է ապացուցել, թէ՝

«Եթէ զուրահապաշտ արքան երթար ու հիւրասիրուէր անհաւատ քրիստոնեային տանը, Սպահանի Դենպեքի (Շէյխ-օլ-Էսլամ) անմիջապէս դահլիճէց կ'ընէր դաշն՝ մեծ յանդիմութեանն ու զայն թակղալի ընթացքին համար»:

Սեթեանական այս տեսակէտը կառուցուած է սոսկ ենթադրութեան վրայ: Ո՛րքան էլ ժամանակաշրջանի Դենպեքի միահեծանը եւ ամե-